ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0010, Կառավարական տուն 1, հեռ. (37410) 52 46 89
Republic Square, Government House 1, Yerevan, Republic of Armenia, tel. (+37410) 52 46 89

«08» 07 2020 թ.

Ե –057

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2020 թվականի հունիսի 15-ի էլեկտրոնային տարբերակով info@cpcarmenia.am հասցեով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով) ուղղված Ձեր նամակի, ստորև ներկայացնում ենք պահանջվող հարցման վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1. Հայտարարագրման էլեկտրոնային բազայի տեղեկությունների համաձայն՝ այս պահին առկա է 3601 ներկայացված և հրապարակված հայտարարագիր: Հայտարարագիր չի ներկայացվել մոտ 119 անձի կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրերի հավաքագրման էլեկտրոնային հարթակը ունեցել է տեխնիկական խնդիրներ, խնդրում ենք հաշվի առնել, որ այս թիվը կարող է դեռևս պարունակել անճշտություններ: Հայտարարատու պաշտոնատար անձանց վերաբերյալ առավել ճշգրտված տեղեկություններ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց և հայտարարագիր չներկայացրած անձանց մասով, Հանձնաժողովը կհրապարակի առաջիկայում:

2. COVID-19-ի հետևանքով ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հայտարարագիր չներկայացրած հինգ անձի դեպքում ուշացումները չեն համարվել օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված:

Տեղեկացնում ենք, որ պայմանավորված այն հանգամանքով, որ հավաքագրման էլեկտրոնային հարթակը սահմանփակ հնարավորություն ունի ավտոմատացված կարգով հաշվետվություններ դուրս բերելու համար, ներառյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող հայտարարտուների և արդեն հայտարարագիր ներկայացրած հայտարարատուների վերաբերյալ: Այս պատճառով Հանձնաժողովը չի կարողացել Ձեր հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված հինգօրյա ժամկետում, և օգտագործել է 30 օրյա ժամկետը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ